ձեւը՝ լռակեաց այս լիճի առջեւ, ամայութեան մէջ՝ խորհրդանշանական եւ տրտում մի բան ունի իր մէջ, ինչպէս մեծ տօների ժամանակ կիսաքանդ տան վրայ բարձրացրած աղքատիկ մի դրօշակի ծփումը...

Գործիքը երիտասարդ եւ վայելուչ մի տղայ է, որի հետ շատ անգամ հանդիպած ենք Երեւանում: Ցիշում եմ նրա մի պատմութիւնը. հայ երգի եւ Լենինի մասին:

— Մի օր,— պատմում էր նա,— յեղափոխութեան սկզբի օրերին, առանձին գնացքով Պետերբուրգից Մոսկուա էինք գնում: Վագոնը լեցուած էր աշխարհի չորս կողմից եկած համայնավար պատգամաւորներով: Էլ ո՞վ ասես չկար՝ չինացիից սկսած մինչեւ աֆրիկեան խափշիկը... Լենինը նստած էր տըխուր, շատ տխուր, եւ մենք ամէնքս էլ, արիւնի եւ կրակի այն օրերին, մեր սրտերի դէմ անորոշ, անհասկանալի մի ցաւ էինք սեղմել: Ոչ ոք չէր խօսում: Ցանկարծ, ծանր այդ լռութեան վերջ տալու համար, Լենինը առաջարկեց, որ ամէն մի պատգամաւոր ազգային մի երգ երգի: Ու հերթով երգեցին: Ֆրանսական, գերմանական, սպանիական, իտալական եւ ուրիշ ազգերի գեղեցիկ քայլերգներ երգուեցան, ոմանք ուրախ, ոմանք լի յոյսով եւ թափով, մեծ մասամբ ռազմաշունչ և յեղափոխական... Սակայն, զարմանալի է, բոլոր այդ երգերը մեզ թւում էին հեռաւոր, օտար եւ չինծու. հոգեկան մեր վիճակը մնաց անփոփոխ: Նրից ամէն ոք լռեց եւ պատուհաններից դուրս նայեց արագօրէն խուսափող դաշտանկարին: Լենինը գիմեց ինձ. «Վարդանեան, ասեց, երգեցէք հայերէն մի երգ. ժողովրդական մի երգ»: Երեւակայեցէք, ես երբեք ոչ մի երգ երգած չէի կեանքիս մէջ եւ հայերէն երգ էլ չգիտէի... Կարծում էի, որ չգիտէի... Բայց Լենինը այնպիսի շեշտով խնդրեց, որ անկարելի էր մերժել: Եւ ես երգեցի՝ ո՞րտեղից էլ ծիւքս եկաւ՝ մեր տխուր ու տրտում, մեր լալահառաչ երգերից մէկը: Ռուսական ստեպների վրայ վազող այդ գնացքի մէջ, օտար այդ մարդերով շրջապատուած, արիւնռուչտ այն օրերին, հայ երգը էլ ի՞նչ ասեց այդ մարդկանց՝ չգիտեմ: Գիտեմ միայն, որ երբ վերջացրի, Լենինի աչքերի մէջ արցունք նշմարեցի եւ ամէն ոք խորապէս տպաւորուած էր:

«Հայ երգը, ասացին, ամենից գեղեցիկն էր բոլոր այստեղ երգուած երգերի մէջ»:

Ու Լենինը ասեց, «այո՛, այո՛, այդպէս է»...

* * *

Ոմանք կարք նստեցին, ուրիշները ձի հեծան, իսկ ես ուրիշ համայնավար մի բարեկամի հետ ուղեցինք ոտքով գնալ:

— Այդպիսով երկիրը աւելի լաւ կը տեսնենք:

— Ի՞նչքան ճանապարհ է:

— Կարծում եմ մի ժամ, դուցէ եւ աւելի:

— Դէ, գնանք:

Ճուղին լիճափը լքում է քարեր բաժնելով եւ, երբ բարձրանում է վեր, թմբերի մօտ մրսում է: Միանակաց եւ տխուր պանդխտի նըման, ճանապարհը դանդաղօրէն երկարում է դէպի իր ճակատագիրը, կարծը լաւայի մէջ հերկում է իր բախտը եւ ուժասպառ ոլոր է գալիս յոգնած օձի նման:

Բարեկամս գլուխը վար է ձգել, մտածում է: Իսկ իմ աչքերս անյաղ են: Ա՜հ, այնքա՞ն ծարաւ է նայեւ հոգիս...

Զոր այս հողի վրայ, ուր փոշին ծանր է եւ անդոյն, քայլերս կոխկռտում են դեռ իրարմէ չբաժնուած ձմեռը եւ գարունը:

Լեռների վրայ թառած ձիւնը իր թափանցիկ, բիւրեղեայ եւ պաղ մատներով չոյում է դէմքս եւ միեւնոյն ժամանակ, վերջալոյսի մօտ, արկածախնդիր գարունը դարնում է իր կարմիր գլուխը օդին եւ թմբերի տակ ուրախ հառաչում:

Կատարեալ ամայութիւն: Տեղ տեղ հերկուած, ակօսուած հողերի կտորներ են պառկած:

— Այստեղ ցանո՞ւմ են:

— Ցանում են: Բայց շատ ուշ է հասնում: Երբ վարը հնձում են, այստեղ հասկերը հազիւ նշմարելի են: Անյուսալի հող է, ու ցուրտ է. աղքատ բուսականութիւն կարծր հատիկներով...

Դաշտանկարը պատսպարուել է դեղնագոյն եւ ծանր մի ստուերի փլած կտորների տակ: Այդ կտորները երբեմն երերում են, եւ

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան